ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

ՀՀ, 0015, ք. Երևան, Արգիշտիի 1

№ 4870-Ա «02» դեկտեմբերի 2025թ.

ԳՈՒՅՔԻ ՕՏԱՐՄԱՆ ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ԳԻՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Բաժնետիրական ընկերությունների մասին» օրենքի 59-րդ հոդվածով և 84-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով, հիմք ընդունելով «Կառլեն Եսայանի անվան պոլիկլինիկա» փակ բաժնետիրական ընկերության տնօրենի 20.11.2025թ. հ.168 գրությունը և «ԲիԷսԹի» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից 29.04.2025թ. տրված N ՇԳ-25/19 գնահատման հաշվետվությունը.

1. Երևանի ենթակայության « Կառլեն Եսայանի անվան պոլիկլինիկա» ՓԲԸ-ի (այսուհետ՝ Ընկերություն)՝ հաշվեկշռում հաշվառված, DX3050/150 մակնիշի ռենտգեն ապարատի օտարման մեկնարկային գինը սահմանել «ԲիԷսԹի» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից գնահատված շուկայական արժեքը՝ 26,960,000 / քսանվեց միլիոն ինը հարյուր վաթսուն հազար / ՀՀ դրամ:

2.Սույն որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի առողջապահության վարչության պետի և Ընկերության տնօրենի վրա:

3.Որոշման կատարման հսկողությունը դնել Երևանի քաղաքապետի տեղակալ Ս. Մադաթյանի վրա:

ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ